

Գազմակերպվեց քննարկում Մարտունու հիվանդանոցի արդիականացման և Գավառի N 2 միջնակարգ դպրոցի շենքի կառուցման ծրագրերի շուրջ

16.08.2016

Օգոստոսի 16-ին Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի մոտ տեղի ունեցավ աշխատանքային խորհրդակցություն, որի ընթացքում մարզպետարանում ստեղծված հանձնաժողովի մասնակցությամբ քննարկվեցին Գավառի համար 2 միջնակարգ դպրոցի նոր շենքի կառուցման և Մարտունու բժշկական կենտրոնի արդիականացման հետ կապված հարցեր: Հանձնաժողովի անդամները նշված երկու ծրագրերի վերաբերյալ ներկայացրեցին մարզի ղեկավարի հանձնարարությամբ իրենց կողմից կատարած ուսումնասիրությունների և քննարկումների արդյունքները: Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության շինարարության բաժնի պետի ներկայացմամբ՝ սեպտեմբեր ամսին կավարտվեն Գավառի համար 2 միջնակարգ դպրոցի նորակառույց շենքի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները, որից հետո կհայտարարվի շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցույթ: Քննարկվեցին նաև նշված ծրագրի հետ կապված այլ մանրամասներ, որտեղ, ըստ ներկայացված դիտարկումների, շինարարության մեկնարկին խոչընդոտող որևէ խնդիր չկա: Այնուհետև հանձնաժողովի անդամները մարզի ղեկավարի հետ քննարկեցին Մարտունու բժշկական կենտրոնի արդիականացման հետ կապված խնդիրը: Նախապես ներկայացված երեք տարբերակներից հանձնաժողովը նախապատվությունը տվեց նոր շենքի կառուցման տարբերակին: Սակայն վերջնական որոշումը վերապահվում է ՀՀ կառավարությանը: , Բոլոր դեպքերում ցանկալի կլինի, որպեսզի կառուցվի հիվանդանոցի նոր շենք, քանզի ավելի լավ է մեկ անգամ կառուցել, քան թե մի քանի անգամ վերանորոգել: Սակայն հապճեպ որոշումներ կայացնել պետք չի: Ինչպիսի տարբերակ էլ ընտրվի համապատասխան մասնագետների և Հանրապետության ղեկավարության կողմից, մենք համաձայն ենք և շնորհակալ, - իր ամփոփիչ խոսքում նշեց մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը: